

7926

633.5  
—  
S-26

1925

ԱՆԿՐԳՈՎՈՒՄ ԵՎ ԲԱՏԲԱՏԻՆԻՍՏԻՆԻՍ

# Բաժնակարույծի Գրադարան

633  
Ս-26



**ԲԱՄԲԱԿԱԲՈՒՅԾ! ՀԻՇԻՐ  
ՄԻՇՏ ԼԵՆԻՆԻ ԼՈԶՈՒՆԳԸ  
„ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ“**

133

633.5
S-26

Ա. Գ. ԲՈՒՆՈՒ Ե. ՏԱՐԱՏԻՆՈՎ

2402

2011

633.5  
S-26  
48

ԲԱՄԲԱԿԱԲՈՒՅԾ! չիժիր ՄԻՃՏ ԼԵՆԻՆԻ ԼՈԶՈՒՆԳԸ  
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԽՈՍՔ) „ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ“

1009  
38735  
3945

Ազգրնում Ն. ՏԱՐԱՏԻՆՈՎ

Ռուսերենից թարգմանեց Ա. ՈՀԱՆԵՍՅԱՆ

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Հ.Օ.Խ.Հ. ՎԻՃԻՎՈՐՈՒՄՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԿՆ II

ՇՆՆԱԲԱՐՄՈՒՆ 1

ՁԵ 107/1496 - 2

ՆԵՂՈՒՆԿ Մաքսիմ Գորկի

ԳՐԻՆԻՍՏՐԱՆԸ Բաժնակալություն

ՄԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՔԻՍ

Հրատարակություն Անդրկովկասյան Բամբակագործ Կոմիտեի

1925

13.000



38395-աւ

ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ:

Այս լողունգը (պայմանական խոսքը) գյուղատնտեսութեան մեջ ունի շատ կարևոր նշանակութիւն, իսկ բամբակագործութեան մեջ—ավելի ևս:

Յյս կանոնը յերևում է ամեն մի քայլափոխում բամբակագործութեան ասպարեզում:

Նրան հաստատելու համար կարելի չէ բերել շատ որինականեր:

1. Միշտ լավ է քիչ հող վարել, բամբակի համար, և այդ անել զգուշութեամբ, ընտրողականութեամբ խոր վարելով հողը աշնան և միևնույն ժամանակ, ջրելով աշնանը, կամ ձմեռը, վորպէս զի հողը ավելի լավ փափկի ձմեռվա ցրտերին: Ավելի լավ է այդպէս վարվել, քան թե վարել մեծ քանակութեամբ հող բամբակի համար կամ վարել գարնանը ինչ հող վոր լինի, և ինչ ձևով վոր լինի: Իհնչու համար: Նրա համար, վոր բամբակագործը վերջին դեպքում ավելի քիչ բերք կստանա յուրաքանչյուր որավարից քան թե առաջին դեպքում, յերբ նա մշակում է թեև փոքր քանակութեամբ հող, բայց այդ փոքրը մշակվում է ամենալավ ձևով: Բամբակի արդյունավետութիւնը այս դեպքում կը լինի շատ քան հիմա:

Ուստի կարևոր է ընտրել միշտ պարարտ և փափուկ հող ունեցող դաշտ, մաքրված գանազան ավելորդ խոտերից և բույսերից, և միանգամայն ապահովված ջրի կողմից և հարմար ջրելու տեսակետից: Այսինքն հարկավոր է ընտրել այնպիսի հողամաս, վորը լինի հարթ, առանց փոսերի և հողակույտերի և միևնույն ժամանակ վորոշ թեքութեամբ հարմար ջրելու տեսակետից:

Իսկ յեթե հողամասը պարարտ է և լավ, բայց նրա վրա հողակույտներ և փոսեր, հարկավոր է հարթեցնել դաշտը, վարելու ժամանակ, հարկավոր է հավաքել և դուրս գցել դաշտից բոլոր ավելորդ խոտերը և բույսերը:

2. Միշտ լավ է քիչ ցանել, բայց այնպայման շարքերով, քան թե շատ և խառն, վորովհետև շարքով ցանքսի ժամանակ

22543-60  
22543-60

Քիֆլիս, տպարան «Զարիա Վոստոկ»-ի Ս. Յուլուկիձեյի փ. № 4.  
Գլավլիտ № 612—Տիրաժ 3.000—Պատվեր № 1583.

բամբակը շուտ և լավ և հասնում, լավ բերք և տալիս, իսկ մշակումը, ջրերը և բերք հավաքելը ավելի եծան և նստում:

Ի՞նչու և այսպես: Ահա թե ինչու, վորովհետև կանոնավոր շարքով ցանքսի ժամանակ, շարքերի մեջ գտնված տարածության բամբակի մշակումը կարելի և կատարել ձիերով կամ յեղներով, վորը կնստի ավելի եծան, քան թե բանվորի վարձը: Բացի դրանից, շարքով կատարված ցանքսը պահանջում և ավելի քիչ ջուր, վորովհետև հողի փափկացումը և ավելորդ խոտերի և բույսերի քաղումը կը հեռացնի գետնի մեջ գտնված ջրի դուրընացումը: Բայց կա և մի ուրիշ նշանակալից հանգամանք. այն է՝ վոր կարգով մշակված ցանքսի դեպքում միշտ հեշտ և և հարմար և հողը պարարտացնել փեյխնով կամ բամբակի հատիկներից մնացած քուսպով, (ձեթ քաշելուց հետո):

Այս պարարտացնելը պետք և կատարել ցանելուց առաջ և վարել մի անգամ: Մեր բամբակագործների մեծ մասը հակառակ և կանոնավոր և շարքով ցանքսերին, վորովհետև նրանք ասում են, վոր շատ դժվար և և մեծ հոգս և պատճառում բամբակը շարքով ցանելը. բացի դրանից նրանք վախենում են, վոր շարքով ցանքսի ժամանակ բույսերը խիտ չեն լինի: Ծիշտ և շարքով ցանքս կատարելը մի քիչ ավելի դժվար և, քան խառը ցանքսը, բայց այս դեպքում բոլոր մյուս աշխատանքները կատարվում են ավելի հեշտ, հարմար և եծան:

Բայց յեթև ունենալ շարքով ցանող մեքենա, շարքով ցանքսը կատարվում և շատ հեշտ. իսկ ցանքսը շարքերում կարելի և անել ուզածի չափ խիտ: Շարքով ցանքսի դեպքում, թեև սերմը քիչ և սերմվում, բայց բերքը լինում և առատ:

3. Յուրաքանչյուր դեսյատինը միշտ լավ և ցանել քիչ, լինի դա շարքով թե խառն (շպրտելով), վոչ ավել 2½—3 փութ, խառն ցանելու (շպրտելու) դեպքում և վոչ ավել 1½ փութից շարքով ցանելու դեպքում բույսերի քանակությունը դաշտում լավ և լինի քիչ քան թե շատ և խիտ, վորովհետև խիտ ցանքսի միջոցին բամբակը տալիս և միշտ վատ տեսակի բերք, վորովհետև այդ դեպքում բամբակը չե լինում պտղավետ և վատ և հասնում:

Չարաչար սխալվում են անդրկովկասյան բամբակագործները, վորոնք ցանում են բամբակի սերմ յերկու կամ յերեք անգամ

շատ քան թե այդ հարկավոր և, հասցնելով սերմի քանակությունը, մինչև 8—9 փթի յուրաքանչյուր դեսյատինի համար: Վատ և դա նրանով, վոր, առաջինը, իզուր փող և ծախսվում ավելորդ սերմի համար և, յերկրորդը—այդպիսի խիտ ցանքսի դեպքում աչքի առաջ ունենալով, վոր բամբակագործները շահագրգռված են խիտ ցանքսերում վերջինները լավ բերք չեն տալիս: Ուրեմն այդպիսի խիտ ցանքսերից ստացվում և երկնապատիկ փասս, սերմը ծախսվում և շատ, իսկ բերքը ստացվում և քիչ: Բացի դրանից խիտ ցանքսի ժամանակ ուժեղ զարգանում են զանազան հիվանդություններ և փասսակար միջատներ բամբակի համար, վորը նույնպես նվազեցնում և բամբակի բերքը:

Հայաստանի և Նախիջևանի բամբակագործների ազահությունը հասնում և այն աստիճանին, վոր նրանք ստանալով գործարաններից յուրաքանչյուր դեսյատինի համար չորսական փութ սերմ համաձայն պայմանագրի, իրենց կողմից ավելացնում են 4—5 փութ տեխնիկական կամ կենդանիներին տալու սերմը և այդ բոլորը միասին ցանում են յուրաքանչյուր դեսյատինի վրա, այսինքն 8-9 փութ: Ինչ և ստացվում դրանից?

Սերմերը, որոնք ստացվում են գործարաններից իսկական սերմելու համար և և ընտիր տեսակի, իսկ այն սերմերը վորոնք ստացվում են կենդանիներին կերակրելու համար սերմելու տեսակետից անպետք են, վատարույս և կորցրած ծիլու ընդունակությունը, ուրեմն այն թեթևամիտ բամբակագործները, վորոնք խառնում են այդպիսի վատ տեսակի սերմերը լավ տեսակի սերմերի հետ, միայնգամայն կորուստի են մատնում սեփական աշխատանքը, վորովհետև փչացնում յեն լավ սերմերը, ուրեմն և դրանով նվազեցնում են բերքի քանակը: Յեկ դուրս և գալիս, վոր այդպիսի թեթևամիտ բամբակագործները վնասում են թե իրենց շահերին և թե պետության:

Յեթև մեր բամբակագործները նոյն սխալը սերմերի վերաբերմամբ կատարեն և 1925 թվին և խառնեն կենդանիների կերակրելու համար մեծ քանակությամբ ստացած սերմերը լավ սերմերի հետ, դրանով բամբակագործները միանգամայն կփչացնեն բամբակի բերքը և այդպիսով ավելի ևս մեծ վնաս հասցրած կը լինեն ընթհանուր պետության շահերին:

Ձգուշացնում ենք այդպիսի բամբակագործներին, վոր այդպես չանեն և կորուստի չմատնեն իրենց աշխատանքը:

4. Ավելի լավ է, վոր բամբակի օրելը կասարվի սակավ եվ չափավոր, եվ ավելի բիչ, քան այդ կասարվում է այժմս մեզ մոտ, աճողովկատում ամեն եղ: Շատ առատ և հաճախ ջրելու ժամանակ բամբակը չի լինում պողավետ, վորովհետեև նա ծածկվում է զանազան անպետք խոտերով, ավելի շատ է յենթարկվում հիվանդության և չի հասունանում:

Նրանով, վոր բամբակը առատ և հաճախ են ջրում, սկսում են շատանալ անպետք բույսերը և խոտերը, վորոնք իրենց արմատներով ամրացնում են հողը և սառցնում, դրանով փաստում են բամբակի ազատ զարգացման և նրա հասնելուն:

5. Հողի մշակումը—նրա փափկացումը, անպետք խոտերի և բույսերի պոկելը և հեռացնելը ցանքսի խիտ մասերը կանոնավորելը—պետք է կատարվի հաճախ և զգուշությամբ, վորովհետեև այդ դեպքում բամբակը լաւ է աճում և զարգանում և ավելի ևս պտղավետ դառնում:

6. Թեև բամբակը հերթով մյուս բույսերի հետ ցանելու դեպքում ավելի քիչ տարածություն է բռնում տնտեսության մեջ, բայց և այնպես, հերթով ցանելը ունի մեծ նշանակություն, վորովհետև սերմերի փոփոխությունը պարարտեցնում է հողը: Բամբակի բերքը ավելի ևս շատանում է այն դեպքում, յերբ նա սերմվում է այն դաշտում, վորտեղ դրանից առաջ ցանված է եղել յոնջա, գարինգ շամբալա և նման բակլային բույսեր:

Սրանց հողը այնքան է պարարտանում և ստանում է այնքան աննդարար նյութեր, վոր բամբակի բերքը շատ ժամանակ յերկու անգամ ավելի է լինում սովորականից, և բացի դրանից ցանքսերը ավելի ապահոված են լինում զանազան հիվանդություններից և վնասակար միջատներից, վորովհետև բամբակը ավելի շատ է սնունդ ստանում և ուժեղանում քան թե այնպիսի հողի վրա, վորտեղ նախնիաց տարիների ընթացքում շարունակ բամբակ է եղել ցանած:

7. Յերբեք չի կարելի ցանել կենդանիների ուտեստի համար հատկացրած սերմերը (տեխնիկական սերմերը): Այժմ պետությունը հոգում է լավացնել սերմացուի հատկությունը: Խորհրդային կառավարութունը աճեցնում է իր տնտեսության մեջ բամ-

բակի ամենաընտիր սերմացու և շատ շուտով այդպիսի ընտիր սերմացուի քանակը այնքան կշատացնվի, վոր հնար կլինի դրանցով մատակարարել բոլոր զգուշացի բամբակագործներին:

Յերբեք չպետք է թողնել ցանքսերը խտացած դրության մեջ. հարկավոր է (խիտ թուփերը նոսրացնել, թե չէ այդ խիտ թուփերը կարող են զրկել լույսից և խեղդել մեկս մեկուն. խիտ թուփերը քիչ ճյուղեր յեն տալիս և յեթե դրան միացնել և կողմնակի անպետք խոտերի թիվը, վորոնք ծծելով ջուրը, չորացնում են հողը, կարելի է ասել վոր թուփերի վրա գտնված տուփերի թիվը համում է 3-5-7 հատի, մինչդեռ այդ կողքի ճյուղերի վրա է, վոր պիտի շատանան կնգուղները—բերքի առատացնողները: Դրա համար և յերբ ծիլերը (բողբոջները) նոսրացած են, այսինքն նրանք քանաքությամբ քիչ են դաշտում բերքը լինում է բարձր, այսինքն՝ ավելի լավ, վորովհետև նոսրացած թիփերի վրա լինում են ավելի շատ կողքի ճյուղեր, իսկ յուրականչյուր ճյուղի վրա լինում է 3, 4 կամ 5 կնգուղներ կընշանակե յերբեք անգամ ավելի շատանում է կնգուղների քանակը, քան թե խիտ ցանքսերի թուփերի վրա. և ավելի հեշտ է բերքի հավաքելը:

Վնասակար միջատների դեմ կռվելը նույնպես հարկավոր է կատարել նախորդ, չսպասելով վոր հիվանդությունը տարածվի: Դրա մասին մանրամասն գրված է առանձին գրքույկների մեջ թե ինչ միջոցներով պետք է կռվել վնասակար միջատների դեմ, (տիլերի դեմ): Այդ գրքույկները կարելի յե ստանալ ագրոնոմներից (հողագետներից) կամ բամբակի գործարաններում: Հարկավոր է հիշել, վոր ձեռնառու է ժամանակից ծախսել մեկ մանեք վնասակար միջատների դեմ կռվելու համար, քան հետո յերբ այդ միջատները կշատանան, և կհարկավորվին **սասնյակ մանեքներ**:

Ամենադիտավորն է—ժամանակին ձեռք առնել կուլտուրական միջոցներ, բայց վոչ բժշկական, և յերբեք չի կարելի կռիվը մղել միայն բժշկությամբ, վորը թանգ է նստում: Որինակ Հայաստանում վնասակար չոռը (ժանգը) յերևում և զարգանում է միշտ ցուրտ և սառնամանիք գարնանը: Ուրեմն չոռի դեմ կռվելու համար հարկավոր է վոչ միայն բամբակի բժշկությունը տանել, ցանելով բամբակի վրա քուրքուրդի փոշի, այլ սկսել բամբակի ցանումը վոչ շուտ մայիսի 1-ից, իսկ ցուրտ գարնանը նույնիսկ մայիսի 10-ից:

Նմանապես պտղային միջատի դեմ կռվելու համար հարկավոր է, վոր ցանքսը չլինի խիտ, այլ լինի նոսր—այսինքն շարքով:

Բոլոր ասածներից մենք տեսնում ենք հետևյալը:

1. Հողը բամբակի համար հարկավոր է զբաղեցնել և վարել քիչ, բայց լավ, այսինքն վոչ թե արորով և վոչ ել գարնանը ցանքսից առաջ, այլ անպայման գուլթանով նախորոք աշնանը, իսկ ձմեռը հարկավոր և ջրել սառնամանիքներից առաջ, վոր հողը փափկի:

2. Բամբակը հարկավոր է ցանել վոչ ցիր ու ցան ձևով, ինչպես հացահատիկներ, այլ շարքերով, վորն ավելի լավ է և առատավետ. աճումը, հասնելը և սրա վրայի հոգտարութունը հաջողվում է ավելի լավ, բերքը ստացվում է բարձր հատկության և ծախսը նստում է եժան: Յուրաքանչյուր գեսյապինի համար շարքով ցանքսի դեպքում հարկավոր է 1½-2 փութ սերմացու և մինչև 3 փութ և վոչ ավելի ցիր ու ցան ցանքսի ժամանակ:

Հարկավոր է խուսափել շատ վաղ և շատ ուշ ցանքսերից, ամենալավ ցանքսի ժամանակը պետք է հաշվել մայիսի 1-ից մինչև 30-ը:

3. Ջրելը հարկավոր է կատարել ավելի զգույշ, չափավոր, այսինքն ի չարն չգործադրելով տոանց կարիքի ջրելու քանակը և թիվը: Հարկավոր է հիշել, վոր ցանքսերը, վորոնք արված են նախնական ջրելու հետ միասին, (арат) միշտ վստահելի յեն և տալիս են լավ բերք: Վերջացնելով արատը, հարկավոր է ժամանակին կատարել հողի փշրելը, փափկացնելը, վոր հողը չչորանա. վերջին անգամ ջրելը, բացի բացառիկ դեպքերից, չի կարելի կատարել ոգոստոսի 15-ից ուշ:

4. Բամբակենիի պարարտացնելը շատ կարևոր է, վորովհետև դա ոգնում է աճմանը և պտղատվությանը, այդ աշխատանքները գնահատվում են բերքի առատ և լավ հետևանքով, և ստացվում է լավ արդյունք:

5. Բամբակենու մշակումը եվ հոգսարուքյունը—հողի փշրումը, անպետք խոտերի հեռացնելը, և ծիլերի նոսրացնելը հարկավոր է կատարել միշտ մաքուր, ուշադրությամբ և գլխավորը— իր ժամանակին ինչպես ձիաքարչ արորներով — այնպես և թորխերով, վորովհետև դա պահում է նամությունը հողի մեջ

և քչացնում է ջրի նոր պահանջը, արագացնում է աճումը, ավելացնում բամբակների պտղատվությունը, և նրա հասունացումը:

Դրա հետ միասին խիտ ցանքսերը և անպետք բույսերը ներկայացնում են հարմար հող բամբակի վնասակար թշնամիների զարգացման համար, մասնավորապես կնգուղի միջատի համար:

6. Յերբք չի կարելի թողնել ցանքսերը ծածկված խիտ, խոտերով և կարծել, թե, խիտ ցանքսերը, ավելորդ բույսերը և խոտերը իրենց շվաքով կը պահպանեն բամբակը չորությունից, դա սխալ է հենց նրանով, վոր խիտ ցանքսերը և խոտերի միջոցով գետնում գտնված ջուրը ավելի շուտ է գոլորշիանում և այդպիսով նամությունը պակասում է:

7. Վոչ մի դեպքում չի կարելի ցանել տեխնիկական սերմը կամ խառնել դրան իսկական սերմացվի հետ:

8. Ամենալավ կովի միջոցը վնասակար միջատների և այլ վնասողների դեմ պետք է հաշվել կուլտուրական և ընդլիմադրող միջոցները, վորոնք ավելի եժան են նստում և ոգտավետ յեն, քան բժշկական միջոցները, (փոշի փչելը կամ սրակելը):



Անդրեովհասյան Բամբակի Կոմիտեի Երասարակի և  
հետևյալ գրույկները

I. Բ Ա Ճ Ի Ն

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՒ ԽՆԱՄԲԸ

- № 1. Բամբակենի պարտադրանքները բերքի ստատոսցման նպատակով պայմանն է—Պ. Մեղվեղեվ:
- № 2. Ինչ և հարկավոր խմանայ բամբակագործին ջրի մասին, փորակողի ստանա լավ բերք—Ինժիներ Գ. Մանուչարով:
- № 3. Ինչու շարքով ցանքը լավ և ցրիվ ցանքից—Ա.գրեում Բ. Զեղլից:
- № 4. Ինչու և անհրաժեշտ հողի փխրամը բամբակի մշակման համար և ինչու մե և կայանում նրա ոգուտը—Ա.գրեում Ա. Գալգուշին:
- № 5. Ինչ փոստ են հասցնում վայրի խոտերը և ինչպես նրանց հետ կովել—Պրոֆ. Պ. Ժուկովսկի և ագրոնոմ Ե. Կելին:
- № 6. Բամբակարույժ հիշիր Լենինի լուսնագր՝ «Լավ և քիչ բայց լավ»—Ա.գրեում Դ. Տարախինով:

II. Բ Ա Ճ Ի Ն

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍՍՏՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- № 1. Կնդուղի վորդը—բամբակարույժի ամենամեծ թշնամին և—Ենսամուլոզ ՅՍ. Պրինց, հանրամատչելի փոխադրաթյան սպրանում Ե. Կելին:
- № 2. Ինչ բան և չտար և կոխի նրա հետ—Պրոպ. Ք. Զաչեվ:
- № 3. Ինչպես կովել բամբակենու փճիլի հետ—Ենսամուլոզ Դ. Ա. Սեխանգելսկի:

Ա Մ Ե Ն Ս Ի Գ Բ Ք Ո Ւ Յ Ա Ղ Ա Բ Ճ Ե Ի Օ Կ Ո Պ.

Անդրբամբակկամի գրքույկները կարելի և ստանալ շրջանային սպրանամներից և մասակա գործարաններից կամ գնման կայարաններից:





ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

2013

« Ազգային գրադարան »



NL0080384

